ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 հունիսի 2024 թվականի № 268-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒՐ ՏՈԿՈՍ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹԻՑ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի դեկտեմբերի 5-ի № 1194 որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի՝ **որոշում եմ.**

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության հարյուր տոկոս պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող բաժնետիրական ընկերությունների *2023* թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով ստացված զուտ շահույթից *2024* թվականի պետական բյուջե շահութաբաժինների վճարման չափերը.

1) «Ռուբիկ Հարությունյանի անվան Աբովյանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն - ***9.481.750*** ՀՀ դրամ,

2) «Աբովյանի ծննդատուն» պետական փակ բաժնետիրական ընկերություն - ***318.800*** ՀՀ դրամ,

3) «Հրազդանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն - ***5.130.000*** ՀՀ դրամ,

4) «Չարենցավանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն - ***19.507.000*** ՀՀ դրամ,

5) «Նոր Հաճնի պոլիկլինիկա» պետական փակ բաժնետիրական ընկերություն - ***572.000*** ՀՀ դրամ,

6) «Ծաղկաձորի բժշկական ամբուլատորիա» պետական փակ բաժնետիրական ընկերություն - ***1.100*** ՀՀ դրամ:

2. Շահութաբաժնի գծով ընկերությունների վերը նշված պարտավորությունները սահմանված կարգով *(ոչ ուշ, քան մինչև 2024 թվականի հոկտեմբերի 1-ը)* ենթակա են վճարման

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի ***900005200416*** հաշվին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

2024 թվականի հունիսի 28
ք. Հրազդան